# Ուսանողական կյանք



Ծաղիկներ՝ Զուլիետային:

# «ԱՐՑԱԽ-88»

Մեկնարկ է վերցրել «Աշխատանքային կիսամյակ—88-ը»: Այն կընթանա կոմերիտմիության աշխատանքի արմատական վերակառուցման, մեր կյանքի բոլոր ոլորտների նորացման նոր բնագծեր դուրս գալու պայմաններում: Այս տարի Հայաստանի ուսանողական ջոկատներից մեկը մասնակցելու է մեր մարզի սոցիալ-տնտեսական ծրագրի իրականացմանը: Երևան և Կիրովական քաղաքների տարբեր ուսումնական հաստատությունների մի խումբ ուսանողներ՝ կամավոր հիմունքներով միավորված «Արցախ-88» ուսանողական ջոկատում, իրենց աշխատանքային կիսամյակը կանցկացնեն Ասկերանի շրջանում:

Ստեփանակերտի օդանավակայանում վայրէջք կատարած ինքնաթիռի սովորական ուղևորներից առանձնանում էին կանաչ համազգեստներով մեր մարզը ժամանած ուսանողական ջոկատի մարտիկները: Նրանց դիմավորելու էին եկել Ասկերանի շրջանի հասարակայնության ներկայացուցիչները: Ապագա մանկավարժներին, ինժեներներին, բժիշկներին ու ժողովրդական տնտեսության մյուս մասնագետներին մարզի կոմերիտականների ու երիտասարդության անունից ողջունում է կոմերիտմիության շրջկոմի առաջին քարտուղար Հ. Ավետիսյանը:

Լեռնային Ղարաբաղ այցելելու առիթը անչափ ոգևորել է ուսանողական ջոկատի տղաներին ու աղջիկներին, մանավանդ նրանց, ովքեր առաջին անգամ են լինում այս չքնաղ երկրամասում: Այդ մասին, ինչպես նաև ջոկատի անելիքների մասին խոսեց նրա հրամանատար, Երևանի Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտի ուսանող Հրաչյա Մուսայելյանը:

—Մեր կյանքի բոլոր բնագավառները շոշափող փոփոխությունները,— ասաց ջոկատի կոմիսար, Երևանի զոոանասնաբուժական ինստիտուտի ուսանող Վարդան Այվերդյանը,— չեն կարող չվերաբերել նաև ուսանողական ջոկատներին: Մեզանից պահանջվում է ապահովել աշխատանքային կիսամյակի բարձր արդյունավետություն, աշխատանքի ու հանգստի բովանդակալից կազմակերպում:

ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման ծրագրի իրականացմանը մասնակցելը կդառնա ջոկատի յուրաքանչյուր մարտիկի հայրենասիրության, քաղաքացիական պարտքի ըմբռնման վառ դրսևորումներից մեկը. այս միտքն արտահայտեցին «Արցախ—88-ի» մարտիկներ Զուլիետա Ներսիսյանը (Բրյուսովի անվան մանկավարժական ինստիտուտ), Արշակ Ամիրբեկյանը (պետական համալսարան), Համլետ Քոչարյանը (գյուղատնտեսական ինստիտուտ), Ներսես Տոնոյանը, Զինավարդ Պլեչյանը (երաժշտական մանկավարժական ուսումնարան), Արարատ Սաարյանը (Կիրովականի պոլիտեխնիկական ինստիտուտ), Գոհար Զոհրաբյանը (պետական համալսարան), Սուսաննա Հայրապետյանը (Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտ) և ուրիշները:

«Արցախ—88»-ին ընդունող տնտեսական կազմակերպության՝ Ասկերանի շրջանի Ն. Ստեփանյանի անվան կոլտնտեսության նախագահ Գ. Մանասարյանը, բարի գալուստ մաղթելով ջոկատի մարտիկներին, հավաստիացրեց, որ տեղում ամեն ինչ կարվի ջոկատի առօրյան հետաքրքիր ու բովանդակալից դարձնելու համար:

Ուսանողական ջոկատի մարտիկների հետ հանդիպմանը ներկա էր ՀամԼԿԵՄ կենտկոմի համամիութենական ուսանողական ջոկատների կենտրոնական շտաբի պատասխանատու աշխատող Մ. Պալատկինը:

Ս. ԻՇԽԱՆՅԱՆ



«Արցախ-88» ջոկատի մի խումբ մարտիկներ:

Լուսանկարները՝ Ի. ՄՈՎՍԻՍՅԱՆԻ